Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին,
վարկային կազմակերպություններին,
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ին,
ապահովագրական ընկերություններին,
ներդրումային ընկերություններին,
Արժեթղթերի կարգավորվող շուկայի օպերատորին,
Կենտրոնական դեպոզիտարիային
Ներդրումային ֆոնդի կառավարչին,
«Հայաստանի բանկերի միություն» ԻԱՄ-ին

Հարգելի տիկնայք և պարոնայք.

ՀՀ կենտրոնական բանկը, լիցենզավորման և գրանցման գործընթացների առավել օպտիմալ կազմակերպման և ֆինանսական կազմակերպությունների հետ աշխատանքում հարմարավետություն ապահովելու նպատակով, 2009 թվականից ներդրել է այդ գործընթացների իրականացման համար անհրաժեշտ, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան կանոնակարգերով նախատեսված փաստաթղթերի՝ էլեկտրոնային եղանակով ստացման քաղաքականություն՝ ՍԻ-Բի-Էյ-նեթ էլեկտրոնային համակարգի Licensing էլեկտրոնային հասցեի միջոցով:

Նշված քաղաքականության պատշաճ իրականացման նպատակով սույն թվականի հունվար ամսին ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչությունը շրջաբերական նամակ էր ուղարկել ֆինանսական կազմակերպություններին՝ առաջարկելով նշված հասցեով փաստաղթղթերը ուղարկելիս պահպանել մի շարք պահանջներ: Սակայն մինչ օրս այդ պահանջները Ընկերությունների կողմից պատշաճ կերպով չեն պահպանվում և պարբերաբար խախտվում են:

Մեկ անգամ ևս հայտնում ենք, որ հաղորդագրությունները ուղարկելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ պահանջները.

- փաստաթղթերը պետք է ներկայացնել միայն ՀՀ կենտրոնական բանկի նախագահին ուղղված, իրավասու մարմնի կողմից ստորագրված միջնորդագրին կից,
- փաստաթղթերը պետք է շարադրված լինեն Unicode տառատեսակով,
- անպայման պետք է լրացնել հաղորդագրության Subject դաշտը,
- միջնորդագրում նշված կից փաստաթղթերի էջերի քանակը և փաստաթղթերի ցանկում նշված փաստաթղթերը պետք է համապատասխանեն փաստացի կցվող փաստաթղթերին և դրանց էջերի քանակին,

- ուղարկվող ֆայլերը պետք է ունենան 10 սիմվոլը չգերազանցող լատինատառ անուններ (միայն տառեր և թվեր):

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ խախտումները շարունակվելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկը կարող է դադարեցնել փաստաթղթերի՝ էլեկտրոնային եղանակով ստացումը և անցում կատարել դրանց՝ թղթային եղանակով ստացմանը:

Հարգանքով՝

Իրավաբանական վարչության պետ՝ Վարուժան Ավետիքյան

Սույն գրության վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ կենտրոնական բանկի Իրավաբանական վարչության Լիցենզավորման ու գրանցման առաջին և երկրորդ բաժիններ, հեռ.՝ 59-29-78, 59-29-85, 59-29-87, 59-29-88, 59-29-96: